



Երև. ԿԿՏԲԸ

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 • 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Քիւ 28417
Մարտ 7, 1972

Արժանաշնորհ
Տ. Կարդան Տէր Ասատուրեան
Հովիւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
եւ Մախազայ Ժխական Խորհուրդի
Նիւ Գրիթըն.

Սիրելի Տէր Կարդան,

Ստացած ենք 1972 Փետրուար 25 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը
հաղորդէք թէ 2եր նախագահութեամբ՝ Յունուար 30ին գումարուած 2եր
Ժխական Ժողովին մէջ կատարուած է Ժխական Խորհուրդի հինգ անդամոց
ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք
ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Սկստի ունենալով որ 2եր Ժխական Ժողովը տեղիի ունեցած է Քեմական
Աանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք
Ժխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել Ժխական Խորհուրդի նորընտիր
Դիւանի անդամոց եւ Եկեղեցւոյդ ենթակայ մարմիններու առեւտակետներու
անունը, իսսցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով Ժխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք 2եզի եւ 2եր
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՁԵՂԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

Մանուկ Գաղափկեան
Գ. Ճ. Յովհաննէսեան
Հերրի Դուկաս
Ռիչըրտ Գալաճեան
Ծան Մալճանեան